9-րդ դասարանի ավարտական քննությունների ուղեցույց

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

Հ/Հ	Առաջադրանքները ըստ ներկայացման ձևի	Ենթաառաջադրանքների քանակը	Առավելագույն միավորը
1	Ընտրովի պատասխանով	20	20
2	Կարճ պատասխանով	12	12
3	Ընդարձակ պատասխանով	1	3
	Ընդամենը	33	35

ԹԵՍՏԱՅԻՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳՐԱՅԻՆ ՆՅՈՒԹԸ

1. Բառապաշար
2. Բառակազմություն
3. Չևաբանություն
4. Շարահյուսություն
5. Թարգմանություն
6. Կապակցված խոսք գրելու հմտություն

ՖՐԱՆՍԵՐԵՆ

ԹԵՍՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Թեստը բաղկացած է 8 առաջադրանքից (33 ենթաառաջադրանք):

1-4-րդ առաջադրանքները (20 ենթաառաջադրանք) ընտրովի պատասխանով առաջադրանքներ են: Ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Առաջին առաջադրանքում տրված է տեքստ և դրա վերաբերյալ 5 ընտրովի պատասխաններով ենթաառաջադրանք՝ պատասխանի 4-ական տարբերակով, որոնցից պետք է ընտրել ճիշտ տարբերակը:

Երկրորդ առաջադրանքը կազմված է 8 նախադասությունից, ամեն նախադասության համար տրված է քերականական տարբեր կարգեր արտահայտող 4-ական տարբերակ, որոնցից պետք է ընտրել և տեղադրել ճիշտ տարբերակը:

Երրորդ առաջադրանքը կազմված է 3 նախադասությունից: Տրված են հայերեն նախադասություններ և յուրաքանչյուր նախադասության համար տրված է թարգմանության 4-ական տարբերակ, որոնցից պետք է ընտրել թարգմանության ճիշտ տարբերակը:

Չորրորդ առաջադրանքը կազմված է 4 նախադասությունից: Տրված են նախադասությունների սկիզբը կամ վերջը: Պետք է տրված 4 տարբերակներից ընտրել նախադասության շարունակությունը կամ սկիզբը:

5-8-րդ առաջադրանքները (12 ենթաառաջադրանք) կարճ պատասխան պահանջող առաջադրանքներ են: Կարճ պատասխան պահանջող առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանին տրվում է 1 միավոր:

Հինգերորդ առաջադրանքը կազմված է 5 նախադասությունից: Նախադասություններում բաց թողնված բայերը պետք է գրել նշված ժամանակաձևերով:

Վեցերորդ Անհրաժեշտ է նախադասության մեջ գտնել ավելորդ բառը:

Յոթերորդ առաջադրանքում տրված են հարցերի պատասխանները և պահանջվում է կազմել ճիշտ հարց յուրաքանչյուր պատասխանի համար:

Ութերորդ առաջադրանքում տրված 10 բառերից առնվազն 7-ով պետք է կազմել կապակցված տեքստ (5-7 նախադասություն):

Այս առաջադրանքի կատարումը գնահատվում է հետևյալ չափանիշներով.

1. Առաջադրանքին տրվում է 3 միավոր այն դեպքում, եթե տեքստը ունի ամփոփ, ավարտուն տեսք և թույլ է տրված մինչև 3 ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ:
2. Եթե տեքստը համապատասխանում է տրված պահանջին, բայց թույլ է տրված 3–5 ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ, հանվում է 1 միավոր:
3. Եթե տեքստը համապատասխանում է տրված պահանջին, բայց թույլ է տրված 6-8 ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ, հանվում է 2 միավոր:

Կապակցված խոսքը չի գնահատվում, եթե՝

- խոսքը չունի ամփոփ, ավարտուն տեսք,
- նախադասությունների քանակը 5-ից պակաս է,
- գործածված չեն տրված բառերից առնվազն 7-ը,
- եթե կա 9-ից ավելի ուղղագրական, բառագործածական կամ քերականական սխալ:

Ընտրովի և կարճ պատասխանները պետք է անցկացնել պատասխանների ձևաթուղթ:

Ընտրովի պատասխանով ենթաառաջադրանքների 4 պատասխանից պետք է ընտրել մեկը և «X» նշանով նշել ձևաթղթում:

Կարճ պատասխանով ենթաառաջադրանքների պատասխանները պետք է գրել ձևաթղթի մեջ:

Ձևաթղթում տրված է սխալ նշված պատասխանը ուղղելու երեք հնարավորություն, երկուսը՝ ընտրովի պատասխանով առաջադրանքների համար, մեկը՝ կարճ պատասխանով առաջադրանքների համար: Եթե որոշեք փոխել ընտրովի պատասխանով առաջադրանքի պատասխանը, ապա «**Սխալ նշված պատասխանները փոխելու տեղ**» դաշտում գրեք առաջադրանքի համարը և կատարեք ուղղումը:

Ամփոփիչ վերջնական միավորը ստացվում է լուծված առաջադրանքների միավորների գումարից (առավելագույնը 35 միավոր):